ընդեսցեն անողորմ։ Եւ զամենայն Դադրի խանն իւր գլխով և եօթն որդովն և շատ հեծելովն և Թուրքի սանճախներն ի մի վայր ժողովելով, մտին յերկիրն, և զամենայն երկիրն հրձիգ արարին, և ի սուր մաշեցան, և գերի տարան, և աւար առին զամենայն մարդիք և զանասուն. և ոչ Թողին բնաւ ինչ. բայց միայն Սեչովն ազատեցաւ և Սերաթն. այլ ամենայն ինչ մատնեցաւ ի ձեռս անօրինաց, վասն ծովացեալ մեղաց մերոց։ Եւ զինքն զիւռն պարոնն կենդանի կալան և սպանին չարաչար։ Յետոյ դարձեալ գնոյն պարոն բերեալ նստուցին ի երկիրն, զոր յառաջագոյն էին բերեալ ի վերայ այս իւռնին։ Այսքան է առ այս։

1574. Թվ. ՌԻԳ. Յունիս ամսոյ ԺԸ, օրն վեցշաբթի (ուրբաթ)։ Թագաւորն Ենրիքուս ելաւ գիշերով ի Քրաքովին բերդէն, որ է Թախթն իւր, և փախաւ յերկիրն իւր ի Ֆրանցիա, ուր Թագաւորութիւն էր իւր. և զայս ոչ ոք չգիտաց իւր բոլոր իշխանաց. միայն երեք արամբ ելաւ ի բերդէն, յետոյ գիտացին Թէ Թագաւորն գնաց ի բերդէն, և իսկոյն ընթացեալ այսր և անդր՝ ոչ ուրեք գտան։ Եւ ոմն իշխան Վոյնիցքի ընթացաւ յետ նորա և եհաս նմա ի Հրանիցան, երկու միլ, և եկն անկաւ առաջի Թագաւորին ի վերայ ճանապարհի, և Թագաւորն զտեղի էառ և եկաց. և այս իշխանին ասաց՝ զի կացցէ ի վերայ ոտից իւրոց. և ասաց նմա, Զի՞ ես եկեալ. զի՞նչ կամիս։ Եւ այս իշխանն ասաց, եթէ, Թագաւոր, ողջ լեր. դարձիր վասն Աստուծոյ, քանզի Թէ չդառնաս՝ իմ գլխոյ կորուստ առնես։ Եւ Թագաւորն պատասխանի տուեալ նմա, եթէ, Դարձիր գնա ի բանդ. ոչ Թէ դու միայն եկեալ ես, Թէպէտ ամենայն Բոլցքայ և ամենայն իշխանք գային և զիս կտրատէին յօդ յօդ՝ չիկայ հնար ինձ դառնալոյ. վասն զի պարտ է ինձ գնալ և տեսանել զմայրն իմ և զհայրենի ժառանգութեան աթոռն իմ. զի տհա զեղբայրն իմ մեռուցին մահադեղ արբուցանելով. և մայր իմ միայն գլխով է, և ոչ ոք չունի իւր ձեռնտու կամ օգնական. և միւս կրսեր եղբայրս կատարելութիւն ոչ ունի, և իշխանք և մեծամեծք ընդդիմակցութեամբ հակառակին նմա, և ոչ կամին հնազանդել. երկնչիմ, գուցէ զերկիրս չիտան տուր թշնամեացն. վասն որոյ անպատճառ պիտի երթամ. և մինչեւ չորս ամիս այլուի կու գամ առձեզ. ոչ Թողից զձեզ ի մէջ տարակուսութեան և անիշխանութեան։ Բայց զամենայն ինչ գրով Թողել եմ ի սենեակս իմ՝ խաղոռ (կապերտ?) յետեւ. ի անդ կու գտնուք և կու իմանայք զամենայն որպիսութիւն և զպատճառն գնալոյ իմոյ ի ձէնջ։ Զայս ասելով ուղի անկեալ գնաց ի ճանապարհն իւր։ Եւ զամենայն ինչ զոր բերել էր ի հետ իւր ի Ֆրանցիայէն, զայդ ամենայն յառաջագոյն հանել էր ի բերդէն և ուղարկել էր, անտես ի մարդկանէ՝ յաշխարհն իւր. և երբ եկել են ի սրահն իւր՝ ոչ ինչ գտել են, բայց միայն երկու բարձ գլխոյն։ Եւ այս եղեւ վասն անհնազանդութեան իշխանացն և մեծամեծացն, զոր այսպիսի բան բնաւ ոչ էր եղել այս աշխարհս։ Աստուած զաւարտն ի բարին առնէ. ամէն։